պղերգութիւն, յորանջմամբ քնոյ՝ շարժու-
թիւն մարմնոյս և զազրագործութիւն ՚ի
պէս պէս ախտս․ հեշտալըութիւն լսելեացս․
արատութիւն աչացս․ ցանկութիւն սրտիս․ ի-
գութիւն ռընգացս․ պագշոտութիւն բերա-
նոյս․ անժուժկալութիւն․ շուայտութիւն, և
արբեցութիւն մե"։ Մեղայ չարաբանութիւն
լեզուիս․ ստախօսութիւն․ սուտ երդմամբ
երդմնազանցութիւն․ հակառակութիւն․ վիճա-



բա-

digitised by A.R.A.R.@

բամբասութբ · բանսարկութբ · շոգմոգութբ ·
քսու դատարկաբանութբ · և ծաղու ·
զբօսխօսութբ · հերձախօսութբ · և անիծա
բանութբ · տրտնջելով · դժգոհելով · բամ
բասելով · և հայհոյելով՝ մե՛" : Մեղայ
դողութբ ձեռացս · ագահելով, զրկելով,
հարկանելով, սպանանելով, և ի̃բ դարշ
ածելով՝ մե՛" : Մեղայ ամ յօդուա
ծովք շինուածոյս և ամ անդամօք
մարմնոյս · եօթնեակ զգայարանօքս և
վեցեկին շարժմամբս · վերամբարձ ուղ
նահարութբ, և վայրաքարշ մեղկութբ ·
յաջ և յահեակ խոտորելով · առաջնոցն
մեղանչելով, և վերջնոցն չար նշանակ
դոլով՝ մե՛" : Նաև՝ մեղայ եօթնիցս
յանցանօք մահացու մեղօք : Հպարտութբ
և մասամբք նորին : Նախանձու և մն՛ :
Բարկութբ և մն՛" : Ծուլութբ և մն՛" :
Ագահութբ և մն՛" : Որկրամոլութբ և մն՛"
Բղջախոհութբ և մասամբք նորին, մե՛"
Նաև մեղայ ամ պատուիրանացն այ ·
յանձնառուելեացն և հրաժարելեացն ·
զի ոչ զյանձնառուականն կատարեցի և


digitised by A.R.A.R.@

ռչ ՚ի հրաժարելեացն հեռացոյ. Ո՛ օ-
րհնս ածի՝ և յօրհնեացն հեղձացոյ. ՚ի
կարգս քրիստոնէութեան հրաժարեցոյ՝ և
գործովս անարժանս գտայ. գիտելով՝
՚ի չարիս՝ կամաւ կորացոյ. և ՚ի բարեաց
գործոց ինձէն հեռացայ։ վա՛յ ինձ.
վա՛յ ինձ. վա՛յ ինձ։ Ո՛ ո՞րն ասեմ, կամ
զո՞րն խոստովանիմ. զի անթի՛ւ են յան-
ցանք իմ. անասելի են անօրէնութիւնք
իմ. աններելի են ցաւք իմ. և անբժշկե-
լի են վէրք իմ, Տե՛ր։

Հա՛յր տէր՝ զքեզ ունիմ միջնորդ հաշ-
տութեան և բարեխօս առ միածին որդին
քո. զի իշխանութիւն որ տուեալ է քեզ՝
արձակեսցես զիս ՚ի կապից մեղաց ի-
մոց. աղաչեմ զքեզ։

Կարգաւորութ̃ Հասարակաց Աղօթից Հան-
գստեան ժամուն։

Որ նստարի ՚ի դէմս Հօր քո. զի պահպանո-
ղական ողջոյն Միածնին՝ պահեսցէ զմեզ ՚ի խա-
ւարային գիշերիս։



digitised by A.R.A.R.@

## ԱՌԱՔԵԱ ՏԷՐ

զլոյս քո և զճշմարտութիւն քո. զի առաջնորդեսցեն ինձ և հանցեն զիս ՚ի լեառն սբ և ՚ի յարկս քո։
Մտից առաջի սեղանոյ այ առ ած՝ որ ուրախ առնէ զմանկութիւն իմ։
Խոստովան եղէց քեզ օրհնութբ ած ած իմ։
Ընդէ՞ր տրտում ես անձն իմ կամ ընդէ՞ր խռովես զիս. յուսա՛ առ ած խոստովանեսցի նմա. փրկիչ երեսաց իմոց ած է։
Փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ։ Այժմ և միշտ և յաւի"։
Եւ ես խաղաղութեան զոր աղաչեսցուք ընկալ կե"։
Օրհնութիւն և փառք Հօր և Որդւոյ և Հոգւոյն սբյ։ Այժմ և միշտ և յա"։



digitised by A.R.A.R.@

Եկեսցէ 'ի վերա իմ ողորմութիւն քո տէր. եւ փրկութիւն քո ըստ բանին քում։

Տաց պատասխանի ոյք նախատեն զիս բանիւ՝ զի ես 'ի բանս քո յուսացայ։

Մի՛ 'ի բացեայ առներ 'ի բերանոյ իմ-մէ զբան ճշմարտութեան մինչեւ յոյժ. զի յիրաւունս քո յուսացայ։

Պահեցից զօրէնս քո յամ ժամ. յաւիտեանս եւ յաւիտեանս յաւիտենից։

Գնայի ես յանդորրու՝ զի զպատուիրանս քո խնդրեցի։

Խօսէի զվկայութիւնս քո առաջի թագաւորաց՝ եւ ոչ ամաչէի։

Խորհէի 'ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի։

Համբարձի զձեռս իմ 'ի պատուիրանս քո՝ զոր սիրեցի, եւ խորհէի յարդարութեան քում։

Յիշեա՛ զբանս ծառայի քոյ, յոր եւ յուսացուցեր զիս։

Սա մխիթարեաց զիս 'ի խոնարհութեան իմում. զի բանն քո կեցոյց զիս։



digitised by A.R.A.R.@

Մեղաւորք անիրաւեցան ընդ իս յոյժ. այլ յօրինաց քոց ես ոչ խոտորեցայ:
Յիշեցի զիրաւունս քո յաւիտենից Տէր՝ և մխիթարեցայ:
Տրտմութիւն կալաւ զիս ՚ի մեղաւորաց. և ոյք թողին զօրէնս քո:
Գովելի էին ինձ իրաւունք քո ՚ի տե-ղւոջ պանդխտութեան իմոյ:
Յիշեցի ՚ի գիշերի զանուն քո Տէր՝ և պահեցի զօրէնս քո:
Ա՛յս եղև ինձ ճանապարհ ՚ի կեանս. զի զարդարութիւնս քո խնդրեցի:
Զանօրէնսն ատեցի. և զօրէնս քո սի-րեցի:
Օգնական և փրկիչ իմ ես դու. և ես ՚ի բանս քո յուսացայ:
Ի բաց եղերուք յինէն չարք. և քննեցից զպատուիրանս այ իմոյ:
Օգնեա՛ ինձ ըստ բանի քում և կեցո՛ զիս. և մի՛ յամօթ առներ զիս ՚ի յուսոյ իմմէ:
Օգնեա՛ ինձ և ապրեցո՛ զիս. և խոր-հեցայց յիրաւունս քո յամ ժամ:



digitised by A.R.A.R.@

Անարգեցեր զամն՝ որք ապստամբք եղեն յարդարութենէ քոյ. զի անիրաւութք էին խորհուրդք նց։

Յանցաւորս համարեցայ զամ մեղաւորս երկրի. վն այսորիկ սիրեցի զպատուիրանս քո։

Բևեռեա՛ ընդ երկիւղ քո զմարմինս իմ. զի ՚ի դատաստանաց քոց երկեայց յոյժ։

Մերձեսցին խնդրուածք իմ առաջի քո տր. ըստ բանի քում իմաստուն արա՛ զիս։

Մտցեն աղօթք իմ առաջի քո տր. և բանիւ քով փրկեա՛ զիս։

Բղխեսցեն շրթունք իմ զօրհնութիս քո. յորժամ ուսուսցես ինձ զարդարութիս քո։

Խօսեսցի լեզու իմ զբանս քո. զի ամ պատուիրանք քո արդարութ են.

Եղիցի ձեռն քո ՚ի կեցուցանել զիս. զի զպատուիրանս քո ընտրեցի։

Ցանկացայ փրկութե քում տր. և օրէնք քո խօսք իմ էին։



digitised by A.R.A.R.@

Կեցցէ անձն իմ օրհնեսցէ զքեզ, և
իրաւունք քո օգնեսցեն ինձ։

Մոլորեցայ ես որպ՟էս ոչխար կորուսեալ.
խնդրեա՛ զծառայս քո՝ զի զպատուի-
րանս քո ես ոչ մոռացայ։

Մի՛ եկեսցեն 'ի վ՟ր մեր ոտք ամբարտա-
ւանից. և ձեռք մեղաւորաց մի՛ դողա-
ցուսցեն զմեզ։

Անդ անկցին ամ՟քն՝ ոյք գործեն զա-
նօրէնութի՟. մերժեսցին և այլ մի՛ կա-
րասցեն հաստատիլ։

Ես 'ի տ՟ր յուսացայ՝ ցնծացայց և ու-
րախ եղէց յա՟ծ փրկիչ իմ։

Տ՟ր տ՟ր եւ ինձ զօրութի՟, և կացոյց զոտս
իմ 'ի հաստատութե՟. 'ի վ՟ր պարանոցի
թշնամեացն կացոյց զիս՝ և հանգոյց
զիս երագ երագ։

Որ բնակեալն է յօգնութի՟ բարձրելոյն
ընդ հովանեաւ ա՟յ յերկնից հանգիցէ։

Ասասցէ տ՟ն ընդունող իմ ես դու.
ապաւէն իմ ա՟ծ և ես յուսամ 'ի նա։

Նա՛ փրկեսցէ զիս յորոգայթէ որսո-
ղին. և 'ի բանիցն խռովութե՟։



digitised by A.R.A.R.@

Ի Թիկնամէջս իւր ընկալցի զքեզ. և
'ի հովանի թևոց նր̄ յուսասցիս:
Ոպ̄ զզէն շուրջ եղիցի զքև ճշմար-
տութիւն նր̄:
Ոչ երկիցես դու յերկիւղէ գիշերի.
և ոչ 'ի նետէ' որ թռչի 'ի տուէ:
Յիրէ' որ շրջի 'ի խաւարի 'ի գայթակ
ղութէ̃ դիւին 'ի հասարակ աւուր:
Անկցին 'ի կողմանէ քումմէ հազարք.
և բիւրք ընդաջմէ քումմէ. և առ քեզ
ինչ ոչ մերձեսցին:
Բայց միայն աչօք քովք հայեսցիս
դու. և զհատուցումն մեղաւորաց տես
ցես. զի դու տր̄ յոյս իմ ես:
Զբարձրեալն արարեր քեզ ապաւէն.
զի ոչ հասցին առ քեզ չարք. և տան-
ջանք մի' մերձեսցին 'ի յարկս քո:
Հրեշտակաց իւրոց պատուիրեալ է վս̄
քո 'ի պահել զքեզ յամ̄ ճանապհս քո.
Ի բազուկս իւրեանց ընկալցին զքեզ.
զի մի' երբէք հարցես զքարի զոտն քո:
Ի վր̄ իժից և քարբից գնասցես դու
և առ ոտն կոխեսցես զառիւծն և զը
վիշապն:



digitised by A.R.A.R.@

Զանզի յիս յուսացաւ. և փրկեցից զնա. հովանի եղէց նմա զի ծանեաւ զանուն իմ։
Կարդասցէ առ իս, և ես լուայց նմա. և ընդ նմա եղէց ՚ի նեղութ՟ե։
Փրկեցից և փառաւոր արարից զնա. երկայն աւուրբք լցուցից, և ցուցից նմա զփրկութ՟ի իմ։
Առ քեզ տ՟ր համբարձի զաչս իմ, որ բնակեալդ ես ՚ի յերկինս։
Որ՟պ աչք ծառայի ՚ի ձեռն տ՟ն իւրոյ. և որ՟պ աչք աղախնոյ ՚ի ձեռն տիկնոջ իւրոյ։
Այնպէս են աչք մեր առ քեզ տ՟ր ա՟ծ մեր. մինչև ողորմեսցիս ՚ի վ՟ր մեր։
Ողորմեա՛ մեզ տ՟ր ողորմեա՛ մեզ. զի բազում լցաք արհամարհանօք։
Առաւել լցան անձինք մեր նախատանօք՝ որք նախատէին զմեզ. և արհամարհանօք ամբարտաւանից։
Տ՟ր՝ յանուն քում կեցո՛ զիս. և ՚ի զօրութ՟ե քում իրաւ արա՛ ինձ։
Տ՟ր՝ լուր աղօթից իմոց. ունկնդիր բանից բերանոյ իմոյ։



digitised by A.R.A.R.@

Օտարք յարեան 'ի վր իմ. և հզօրք
խնդրեցին զանձն իմ. և ոչ համարե-
ցան զքեզ ած առաջի իւրեանց։

Ահա ած օգնական իմ. և տր ընդու-
նօղ հոգւոյ իմոյ։

Դարձուցանել զչարն 'ի թշնամիսն
իմ. ճշմարտութբ քով սատակեա զնս։

Եւ կամօք իմովք պատարագս մատու-
ցից քեզ. և խոստովան եղէց անուան
քում տր՝ զի բարի է։

Զամ նեղութե իմմէ փրկեցեր զիս. և
'ի թշնամիս իմ ետես ակն իմ։

Օրհնեալ ես դու տր ած հարցն մե-
րոց. գովեալ և առաւել բարձրացեալ
յաւիտեան։

Եւ օրհնեալ է անուն սբ փառաց քոց.
գովեալ և ա"։

Օրհնեալ ես 'ի տաճարի փառաց սրբ
բութե քոյ. գով"։

Օրհնեալ ես 'ի վր աթոռոյ արքայու-
թե քո. գովեալ։

Օրհնեալ ես՝ որ նայիս 'ի քրոբէս և
հայիս յանդունդս. գով"։



Օրհ

digitised by A.R.A.R.@

Օրհնեալ ես ՚ի վր՟ հաստատուե՟ երկ
նից․ գովեալ և՛՛ ։

Օրհնեցէք զա՟ծ ՚ի սրբուե՟ նր՟․ օրհ-
նեցէք զնա ՚ի հաստատուե՟ զօրուե՟ նր՟։

Օրհնեցէք զնա ՚ի զօրուե՟ նր՟․ օրհնե-
ցէք զնա ՚ի բազում մեծուե՟ նր՟։

Օրհնեցէք զնա ՚ի ձայն օրհնուե՟․ օրհ
նեցէք զնա սաղմոսիւք և օրհնուբ՟։

Օրհնեցէք զնա ցնծութբ՟․ գովեցէք
զնա ուրախութբ՟։

Օրհնեցէք զնա ՚ի քանս քաղցր․ գովե
ցէք զնա ՚ի բարբառ լսելիս․

Օրհնեցէք զնա ՚ի ձայն գոհութե՟․
ամ՟ հոգիք օրհնեցէք զտր՟։

Մ․րդ՝ արձակեա՛ զծառայս քո տր՟՝ ըստ
բանի քում ՚ի խաղաղութի՟․ զի տեսին
աչք իմ զփրկութի՟ քո․ զոր պատրաստե-
ցեր առաջի ամ՟ ժողովրդոց։

Լոյս ՚ի յայտնութի՟ հեթանոսաց․ և
՝փառք ժողովրդեան քում իէլի։

Ձգեցեր զձեռն քո և փրկեաց զիս
աջ քո․ և տր՟ հատուսցէ ընդ իմ։

Տր՟ ողորմութի՟ քո յաւիտեան՝ զգործս
ձե-



digitised by A.R.A.R.@

ձեռաց քոց մի՛ անտես առներ ։
Տէր՝ հա՛ն 'ի բանտէ զանձն իմ. գոհա-
նալ զանուանէ քումմէ ։
Եւ քեզ սպասեն արդարքն մինչև հա-
տուսցես ։
Մեծացուսցէ անձն իմ զՏր. և ցըն-
ծացէ հոգի իմ յԱծ փրկչաւ իմով ։
Զի արար 'ի վե՛ր խոնարհութե՛ աղախ-
նոյ իւրոյ այսուհետև երանեսցեն ինձ
ամ ազգք ։
Զի արար ընդ իս մեծամեծս հզօրն. և
սբ է անուն նր.
Ողորմութի արար յազգաց յազգս եր-
կիւղածաց իւրոց. և արար զօրութի
բազկաւ իւրով ։
Ցրուեաց զամբարտաւանս 'ի միտս
սրտից. և քակեաց զհզօրս յաթոռոց ։
Զխոնարհս բարձրացոյց, զկարօտս ե-
լից բարութե, և զմեծատունս արձակեաց
ունայնս ։
Պաշտպանեաց իէլի ծառայի իւրոյ
յիշելով զողորմութի իւր ։
Որպ խօսեցաւ առ հարսն մեր, ընդ աբ-


րա-

digitised by A.R.A.R.@

բաղձամբ և զուարճի նո՛ր յաւիտեան ։
Տո՛ւր զօրութի՛ ծառայի քոյ ․ կեցո՛ զոր-
դի աղախնոյ քոյ, և արա՛ առիս նշան
բարութեան ։
Տեսցեն ատելիք իմ և ամաչեսցեն ․ զի
դու տէր օգնեցեր ինձ և մխիթարե-
ցեր զիս ։
Փառք հօր և որդ" ։

## Նորին տեառն Գրիգորի Նարեկացւո-
## ւոյն ։ 41 ։

Որդի ա՛յ կենդանւոյ՝ օրհնեալդ յա՛ւէտ, հօրդ ահաւորի անքնն-
նելի ծնունդ ։ Որ տկարանայ առ՝ ի քէն
և ո՛չ ինչ ։ Որ ՝ի ծագել անսասանելի նոր
շուլեց ողորմութե քո փո՛յթ՝ հալին մեղք ․
հալածին դևք ․ ջնջին յանցանք ․ խզին
կապանք ․ խորտակին շղթայք ․ կենդա-
նածնին մահացեալք ․ բժշկին հար-
ուածք ․ ողջանան վէրք ․ բառնին ապա-
կանութի՛ք ․ տեղի տան տխրութի՛ք ․ նա-
հանջին հեծութի՛ք ․ փախնու խաւարն ․
մեկնի մէգն ․ մերժի մառախուղն ․ փա-
րատի մռայլն ․ սպառի աղջամուղջն ․
վե-



digitised by A.R.A.R.@

վերանայ մուժին․ գնայ գիշերն․ տա-
րագրի տագնապն․ չքանան չարիքն․
հալածին յուսահատութիւնք։ Եւ թագա-
ւորէ ձեռն քո ամենակալ՝ քաւիչդ
ամի։ Որ ոչ եկիր կորուսանել զմարդ-
կան հոգիս, այլ՝ կեցուցանել․ Թո՛ղ ինձ
զանթիւ չարիսն իմ բազում ողորմու-
թեդ։ Զի դու միայն ես երկնի ան-
ձառ․ և երկրի անպննին․ Ի տարր գո-
յից՝ և յեզր ծագաց աշխարհի։ Սկիզբն
ամի՝ և յամի․ ամի՛ լրմամբ օրհնեալդ
Ի բարձունս։ Եւ քեզ ընդ հօր և
հոգւոյդ տէյ վայել"։

Մաղթանք շնորհաց ընդդէմ արհաւիրաց գիշե-
րոյնոյ։ Ի Աղօթիցն Սրբոյն Գրիգորի Նա-
րեկացւոյն։ ԺԱ։

Ընկա՛լ քաղցրութբ տր ամ հզօր՝
զդառնացողիս զաղաչանս։ Սա-
տի՛ր գթութբ՝ առ. պատկառելը
դիմօք։ Փարատեա՛ ամենապարգև՝ զա-
մօթական տխրութիս։ Բա՛րձ յինէն ո՛-
ղորմած՝ զանըմբերելի ծանրութիս։
Անջրպետեա՛ հնարաւորդ՝ զմահացու-
կբ



digitised by A.R.A.R.@

կրթութիւն։ Ահարեալ միշտ յաղթօղ՝ ըզ
խաբօղին հնձութիւն։ Բացատրեալ վեր-
նային, զմոլելոյն մառախուղ։ Անքեալ
կեցուցիչ՝ զկորուսչին ընթացմունս։
Յրուեալ ծածկատես՝ զըմբռնողին չար
դամունս։ Խորտակեալ անքննին՝ զմար
տողին դիմեցմունս։ Տեառնագրեալ
քո անուամբդ՝ զլուսանցոյց երդ յար
կիս։ Պարփակեալ քո ձեռամբդ՝ զա-
ռաստաղ տաճարիս։ Դծագրեալ քո ա-
րեամբդ՝ զմուտ սեմոց սենեկիս։
Կերպացո զքո նշանդ՝ ՚ի հետս ելից
մաղթողիս։ Ամրացո քո աջովդ՝ զհան-
դըստեանս խշտի։ Մաքրեսցես ՚ի հաղ
բից՝ զծածկարան անկողնոյս։ Պահես
ցես քո կամօքդ՝ զտառապեալ անձն
հոգւոյս։ Անխարդախ արասցես՝ զքո
շնորհեալ շունչ մարմնոյս։ Կացուս-
ցես շրջափակ զպար զօրուդ երկնայ
նոյ։ Կարգեսցես ՚ի դիմի ընդդէմ
դիւացն դասու։ Տուր հանգիստ բերկ
րութե՟ մահահանգոյնս նիրհման ՚ի խո-
րութե՟ դիշերիս։ Բարեխօսութե՟ և հայց



ման

digitised by A.R.A.R.@

հաճոյք որբուհւոյ Աստուածածնիդ՝ և
ամ ընտրելոց։ Ամփոփեալ պարուրեմ
զպատուհանս տեսուեց զգայարանացս
իմաստից։ Անզարհուրելի զետեղմամբ,
՚ի ծփական խռովուեց, կենցաղական
զբաղմանց, անրջական երազոց, խոլա-
կանաց ցնորից։ Յիշատակաւ քո յու-
սոյդ անվնասելի պաշտպանեալ։ Նու-
աթափեալ վերստին ՚ի ննջմանէ ծան-
րութե։ Ամենազգաստ արթնութբ։
Հոգենորոգ զուարթութբ ՚ի քեզ ար-
ձանացեալ։ Զայս ձայն մաղթանաց
բուրմամբ հաւատոց քեզ՝ ամենօրհ-
նեալ Թագաւոր փառաց՝ անճառելի փա-
ռաբանողաց երկնագումար խմբից եր-
գակցեալ յերկինս առաքել։ Զի դու
փառաւորեալ ես յամ արարածոց յա-
ւիտեանս յաւիտենից, ամէն։



digitised by A.R.A.R.@

## Աղօթք սըրբազան հօրն Գրիգորի Նարեկացւոյն։ 39։

Ա՟Ծ յաւիտենական՝ բարերար և ամենակալ. արարիչ լուսոյ, և յօրինիչ գիշերոյ. կեանք ՚ի մահու և լոյս ՚ի խաւարի, յոյս ակնունողաց և երկայնմտութիւն տարակուսելոց։ Որ ամենարուեստ իմաստութեամբ դարձուցանես յայգ զստուերս մահու. անճառ ծագումն և անմուտ արեգակն. քանզի՝ ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար գիշերոյ. որում կրկնի ծունր երկրպագութեան ա՟մ եղելոց. երկնաւորաց և երկրաւորաց և սանդարամետականաց։ Որ լսես պէտութեան կարօտելոց. և հայիս յաղօթս խոնարհաց. և ընդունիս զխնդրուածս ն՟ց։ Ա՟Ծ իմ և Թագաւոր իմ. կեանք իմ և ապաւէն իմ. յոյս իմ և վստահութիւն իմ՝ յա՟ ք՟ո ա՟ծդամի։ Ա՟էդ հանգուցել ՚ի հոգիս մեր, մխիթարութիւն վշտաց, և քաւարան մեղուցելոց. որ գիտես զա՟մ յառաջ քան զլինել ն՟ց. առաքեա՛ զպահպանողական

զօ-



digitised by A.R.A.R.@

զօրութեամբ աջոյ քո՝ և փրկեա՛ զիս յեր-
կիւղէ գիշերի և՚ի դիւէն չարէ · Տէր
զի՝ զյիշատակ սոսկալի և մեծ քո ան-
ճառ՝ միշտ համբուրելով շրթամբք
հոգւոյ ըղձութեան շնչոյ՝ կեցից պահպա-
նեալ ընդ այնորիկ՝ որք կարդան զքեզ
՚ի բոլոր սրտէ։ Նաև ՚ի դրոշմէ խաչի
քոյոյ նշանիդ՝ զոր Աստուածային արեամբ
քո ներկեալ նորոգեցեր՝ և ՚ի նոյն շը-
նորհ որդեգրութեան զմեզ մկրտեցեր՝ և
՚ի փառս պատկերի քո նկարեալ յօրի-
նեցեր · այսու պարգևօքդ Աստուածականովք՝
ամաչեսցէ սատանայ · քակտեսցին մեքենայ-
քըն · բարձցին որոգայթքն · պատռե-
ցին մուրտուցելքն · պակասեսցին զէնքն
սայրասուրք · մերժեսցի մէգն · փարա-
տեսցի խաւարն · մեկնեսցի մառախու-
ղըն · բազուկ քո հովանասցի · և աջ քո
կնքեսցէ ։ Աստուած զի՝ գթած ես և ողոր-
մած · և անուն քո կոչեցեալ է ՚ի վե-
րայ ծառայից քոց · և քեզ ընդ Հօր
Հոգւովդ Սրբով փառք իշխանութիւն
յաւիտեանս յա" ։


digitised by A.R.A.R.@

## Աղօթք Սրբոյն Տն Ներսէսի Հայոց Կաթողիկոսի։

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ Հայր եւ որդի եւ սբ հոգի. անեղ եւ անմահ բնութի. արարիչ հրեշտակաց եւ մարդկան, եւ ամ եղելոց. եւ ողորմեա՛ քո արարածոց՝ եւ ինձ բազմամեղիս։

Հաւատով խոստովանիմ եւ երկիր պագանեմ քեզ՝ անբաժանելի լոյս՝ միասնական սբ երրորդութի՛ եւ մի ածութի, արարիչ լուսոյ, եւ հալածիչ խաւարի. հալածեա՛ ՚ի հոգւոյ իմմէ զխաւար մեղաց եւ անգիտութե. եւ լուսաւորեա՛ զմիտս իմ ՚ի ժամուս յայսմիկ աղօթել քեզ ՚ի հաճոյս՝ եւ ընդունել ՚ի քէն՝ զխնդրուածս իմ. եւ ո՛":

Հայր երկնաւոր ած ճշմարիտ՝ որ առաքեցեր զորդին քո սիրելի ՚ի խնդիր մոլորեալ ոչխարին, մեղայ յերկինս եւ առաջի քո, ընկա՛լ զիս ոպ զառակ որդին, եւ զգեցո՛ ինձ զպատմուճանն առաջին՝ զոր մերկացայ մեղօք. եւ ողոր":



digitised by A.R.A.R.@

Որդի՛ այ ած ճշմարիտ՝ որ խոնարհե-
ցար 'ի հայրական ծոցոյ՝ և առեր մար-
մին 'ի սբյ կուսէն մարիամայ վս մե-
րոյ փրկութե. խաչեցար, թաղեցար, և
յարեար 'ի մեռելոց, և համբարձար փա-
ռօք առ հայր, մեղայ յերկինս և առա-
ջի քո յիշեա՛ զիս որպ զաւազակն յոր-
ժամ գաս արքայութբ քով. և՛՛ ։
Հոգի՛ այ ած ճշմարիտ՝ որ իջեր 'ի
յորդանան և 'ի վերնատունն. և լուսա
ւորեցեր զիս մկրտութբ սբ աւազանին՝
մեղայ յերկինս և առաջի քո. մաքրեա՛
զիս վերստին ածային հրով քով՝ որպ
հրեղէն լեզուօք սբ զառաքելոցն. և՛՛ ։
Անե՛ղ բնութի՛՝ մեղայ քեզ մտօք իմովք՝
հոգւով և մարմնով իմով, մի՛ յիշեր ըզ
մեղս իմ զառաջինս՝ վասն անուան
քում սբյ. և՛՛ ։
Տեսո՛ղ ամնի՛՝ մեղայ քեզ՝ խորհրդով
բանիւ և գործով. ջնջեա՛ զձեռագիր
յանցանաց իմոց և գրեա՛ զանուն իմ
'ի դպրութե կենաց. և՛՛ ։
Քննո՛ղ գաղտնեաց՝ մեղայ քեզ կամաւ
և



digitised by A.R.A.R.@

և ակամայ՝ գիտութե̃ և անգիտութե̃ ·
Թողութի̃ շնորհեա՛ մեղաւորիս, զի ՚ի
ծննդենէ մ̃ր աւազանին մինչև ցայ_
սօր՝ մեղուցեալ եմ առաջի ա̃ծութե̃
քո · զգայարանօք իմովք՝ և ա̃մ անդա_
մօք մարմնոյս և ո՛՛։

Ամենախնամ տ̃ր՝ դի՛ր պահապան ա_
չաց իմոց զերկիւղ քո տ̃ր՝ ո՛չ ևս հայ
ել յարատ · և ականջաց իմոց՝ ո՛չ ախոր
ժել լսել զբանս չարութե̃ · և բերանոյ
իմոյ՝ ո՛չ խօսիլ զստութի̃ · և սրտի իմոյ՝
ո՛չ խորհիլ զչարութի̃ · և ձեռաց իմոց՝
ո՛չ գործել զանիրաւութի̃ · և ոտից ի_
մոց՝ ո՛չ գնալ ՚ի ճանապարհս անօրէ_
նութե̃ · այլ ուղղեա՛ զշարժումն սոցա
լինիլ միշտ ըստ՚պատուիրանաց քոց
յա̃մի · և ո՛՛։

Հուր կենդանի քո՝ զհուր սիրոյ քո՝
զոր արկեր յերկիր՝ բորբոքեա՛ յանձն
իմ · զի այրեսցէ զախտ հոգւոյ իմոյ,
և սրբեսցէ զխիղճ մտաց իմոց, և մաք
րեսցէ զմեղս մարմնոյ իմոյ · և վառես
ցէ զլոյս գիտութե̃ քո ՚ի սրտի իմում · և ո՛՛



digitised by A.R.A.R.@

Իմաստու͞թի Հօր յո՛ տո՛ւր ինձ իմաս-
տու͞թի զբարիս՝ խորհել, և խօսել և
գործել առաջի քո յա͞մ ժամ. ՚ի չար
խորհրդոց՝ ՚ի բանից և՚ի գործոց փրկ-
եա՛ զիս. և՛՛:

Կամեցօ՛ղ բարեաց ͞տր կամարար՝ մի՛
թողուր զիս ՚ի կամս անձին իմոյ գը-
նալ. այլ առաջնորդեա՛ ինձ լինել միշտ
ըստ կամաց քոց բարեւիրաց. և ո՛՛:

Թագաւոր երկնաւոր՝ տո՛ւր ինձ զար-
քայու͞թի քո՝ զոր խոստացար սիրելեաց
քոց. և զօրացո՛ զսիրտ իմ ատել զմեղս,
և սիրել զքեզ միայն, և առնել զկամս
քո. և ողոր՛՛:

Խնամօ՛ղ արարածոց՝ պահեա՛ նշանաւ
խաչի քո զհոգի և զմարմին իմ. ՚ի պատ-
րանաց մեղաց, ՚ի փորձութ͞ենէ դիւաց, և
՚ի մարդոց անիրաւաց. և յա͞մ վտանգից
հոգւոյ և մարմնոյ. և ո՛՛:

Պահապան ա͞մի քո՛ աջ քո հովանի լի-
ցի ՚ի վ͞ր իմ ՚ի տուէ և ՚ի գիշերի. ՚ի
նստել ՚ի տան, ՚ի գնալ ՚ի ճանապարհ,
՚ի ննջել և ՚ի յառնել, զի մի՛ երբեք



digitised by A.R.A.R.@

սասանեցայց. և ո՛"։

Տէր իմ՝ որ բանաս զձեռն քո և լընուս զամենայն արարածս ողորմութեամբ քով. քեզ յանձն առնեմ զանձն իմ. դու հոգա և պատրաստեա զպէտս հոգւոյ և մարմնոյ իմոյ յայսմհետէ մինչև յաւիտեան. և ո՛"։

Դարձուցիչ մոլորելոց, դարձո զիս ի չար սովորութեանց իմոց ի բարի սովորութիւն. և բևեռեա ի հոգի իմ զսոսկալի օր մահուն, և զերկիւղ գեհենին, և զսէր արքայութեանն. զի զղջացայց ի մեղաց և գործեցից զարդարութիւն. և"։

Աղբիւր անմահութեան, աղբերացո ի սրտէ իմմէ զարտասուս ապաշխարութեան որպէս պոռնկին. զի լուացից զմեղս անձին իմոյ յառաջ քան զելանելն իմ յաշխարհէս. և"։

Պարգևիչ ողորմութեան՝ պարգևեա ինձ ուղղափառ հաւատով, և բարի գործով. և սուրբ մարմնոյ և արեան քո հաղորդութեամբ գալ առ քեզ. և ո՛"։

Բարերար Տէր՝ հրեշտակի բարւոյ





digitised by A.R.A.R.@

յանձն արասցես զիս․ քաղցրութբ ա-
ւանդել զհոգի իմ․ և անխռով անցու-
ցանել ընդ չարութի այսոցն՝ որք են 'ի
ներքոյ երկնից․ և՛՛։

Լոյս ճշմարիտ քս՝ արժանաւորեա՛ ըզ-
հոգի իմ ուրախութբ տեսանել զլոյս
փառաց քոց 'ի կոչման աւուրն․ և հանգ-
չել յուսով բարեաց յօթևանս արդա-
րոց, մինչև յօր մեծի գալստեան քո․ և՛՛

Դատաւոր արդար՝ յորժամ գաս փա-
ռօք հօր 'ի դատել զկենդանիս և զմե-
ռեալս, մի՛ մտաներ 'ի դատաստան ընդ
ծառայի քում․ այլ փրկեա՛ զիս 'ի յաւի-
տենական հրոյն․ և լսելի արա՛ ինձ զե-
րանաւէտ կոչումն արդարոց յերկնից
արքայութիւնդ․ և ողոր՛՛։

Մարդասէր տր՝ ողորմեա՛ ամ հաւա-
տացելոց 'ի քեզ․ իմոց և օտարաց՝ ծա-
նօթից և անծանօթից՝ կենդանեաց և
մեռելոց․ շնորհեա՛ և թշնամեացն ի-
մոց և ատելեացս թողութի՝ որք առ իս
յանցանացն․ և դարձո՛ զնս 'ի չարեացն՝
զոր ունին վս իմ, զի ողորմութեան
քում



digitised by A.R.A.R.@

քում արժանի եղիցին. և ո՛՛ ։
Փառաւորեալ տէր՝ ընկալ զաղաչանս ծառայիս քո. և կատարեա՛ ՚ի բարի ըղձանս խնդրուածս իմ բարեխօսութե̅ սրբուհւոյ Ա̅ծածնին և Յովհաննու Մկրտչին. և ս̅բյն Ստեփաննոսի նախավկային. և ս̅բյն Գրիգորի մերոյ լուսաւորչին. և ս̅բց Առաքելոց՝ Մարգարէից՝ Վարդապետաց՝ Մարտիրոսաց՝ Հայրապետաց՝ Ճգնաւորաց՝ Կուսանաց՝ Միանձանց. և ա̅մ ս̅բց քոց երկնաւորաց և երկրաւորաց ։ Եւ քեզ փառք և երկրպագութի̅ անբաժանելի ս̅բ Երրորդութե̅դ յաւիտեանս յաւիտենից, ամէն ։

Նորին Գրիգորի առ ծոցքն երգոնուե՝ ողջերս ձաղկանոց բանի. Ի խորոց սրտից խօսք՝ ընդ տիրուհւոյն ։ Չ.

ա̅. Եւ արդ՝ ՚ի վե̅ր այսքանեաց յուսահատութե̅ց և անհարկու սրտաբեկութե̅ց, պակուցանողական



սաստ-

digitised by A.R.A.R.@

սաստկութեց ածային բարկութեց, սաստ-
նապեալ ոգւով թախծութե իսպառ ·
աղաչեմ զքեզ սբ ածածին ։ Հրեշտակ
՚ի մարդկինէ · մարմնատեսիլ քերովբէ ·
երկնաւոր արքայութե · անխառն իբրև
զօդ · մաքուր ոպ լոյս · անշաղախ ըստ
նմանութե պատկերի արուեստկին բարձ-
րութե · գերազանց քան զընակութի ան-
կոխելին սրբութեց · երանաւոր խոստ-
մանն տեղի · եդեմ շնչական · ծառ կե-
նացն անմահից բոցեղեն սրտին պա-
րունակեալ, ՚ի բարձրեալն հօրէ զօրա-
ցեալ և հովանացեալ, հանգստեամբ
հոգւոյն հանդերձեալ և մաքրագոր-
ծեալ, բնակութբ որդւոյն յորդարեալ
և տապաւարեալ ։ Միածինն հօր՝ և
քեզ անդրանիկ · որդի քո ծննդեամբ
և տր արարչութբ ։ Ընդ անաղտ մաքրու-
թեդ՝ և անբիծ բարւի · ընդ անարատ
սրբութեդ՝ և խնամակալ բարեխօս · ըն-
կալ զմաղթանս այսր աղերսանաց՝ քում
դաւանողիս, և մատո՛ ընծայեա՛ ընդ
ամին խառնեալ զբանն իմ նախնի՝ մե-



ծիդ

digitised by A.R.A.R.@

ծիդ ներբողէ՝ 'ի քոյդ պաշտաման։
Ձիւսեամ միացն ցմեղուցելոյս դառն
հեծուծի ընդ քումդ երջանիկ և խոր-
կաւորեալ հայցուածոց՝ տուընկդ կե-
նաց պաղոյն օրհնաւէ. զի 'ի քէն միշտ
օգնեալ և բարեգործեալ, և'ի մաքրա-
կան քո ծնելութիդ ապաւինեալ և
լուսաւորեալ, կեցից քո՛ւ որդւոյ քոյ
և տեառն։

Ճ. Օժանդակեա Թևոցդ աղօթիւք՝
խոստովանեալ մայրդ կենդանեաց և
ելիցն իմ յերկրէս հովտէ, առանց ըըլ-
կանաց հետևել 'իկեանս օթևանացդ
պատրաստուէ, զի Թեթևացի կատա-
րածն իմ ինձ՝ ծանրացելոյս անօրէ-
նութ։ Ըբացես տօն ինձ բերկրութ՝
զօրն իմ տագնապի՝ ողջացուցի՛չ եր-
կանցն եւայի. բարեխօսեամ խնդրեամ
աղաչեամ, զի ըստ անձառելի մաքրութդ
և ահա զբանիդ հաւատամ զընդունե-
լութի։ Ըտասուօ՛ք օգնեա վտանգե-
ցելոյս՝ գովեալդ 'ի կանայս. ծունր
խոնարհեցո առ իմ հաշտութի՝ ծնօղդ-
այ.



digitised by A.R.A.R.@

տ̃յ· ընդ իմում թշուառութիս հոգւո՛ խորանս բարձրելոյն· ձեռն տուր անկելոյս՝ տաճա՛ր երկնայինն· փառաւորեա՛ զորդեդ քո ՚ի քեզ՝ ա̃ծօրէն ինձ հրաշագործել քաւութ̃ի և ողորմութ̃ի՝ աղախին տ̃յ և մայր· բարձրացի՛ պատիւ քո ինև· և ցուցցի՛ փրկութ̃ի իմ քև։

զ̃· Ով Թէ զիս գտցես՝ տիրամայր· Թէ ինձ ողորմեսցիս՝ ո՛րբուհի· Թէ զկորուսեալս շահեսցիս՝ անարատ· Թէ ըզհարթուցեալս յանձանձեսցես՝ երջանիկ· Թէ զամաչեցեալս յառաջ մատուցես՝ բարեշնորհ· Թէ յուսահատելոյս ինձ միջնորդեսցես՝ միշտ ս̃բ կոյս· Թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեա՛լդ տ̃յ· Թէ յիս ցուցցես զգթածութ̃ի՝ լուծի՛չդ անիծից· Թէ զծփեալս հաստատեսցես՝ հանգիստ· Թէ ՚ի խռովութեցս յուզմանց փոխեսցես զիս՝ խաղաղարար· Թէ վրիպելոյս ինձ հնարաւորեսցես՝ գտանել· Թէ վ̃ս իմ մտցես ՚ի հանդէս՝ մահու նահանջիչ· Թէ ըզդառնութիս իմ անուշեսցես՝ քաղցրու



digitised by A.R.A.R.@

թի․ Թէ զբաժանմանն իմ խաւրաց քաւ
եցեր՝ հաշտութի․ Թէ զանմաքրութիւ
իմ բարձեր՝ եղծման ընդդիմանիչ․ Թէ
զմատնեալս մահու փրկեցեր՝ կենդա
նի՛ լոյս․ Թէ զլալեացս ձայն հատցեր՝
բերկրութի․ Թէ զխորտակեալս կազդու
րեցեր՝ դե՛ղ կենաց․ Թէ ՚ի կործա
նեալս յիս ակնարկեցեր՝ հո՛գելեց․
Թէ ողորմութե՛ք ինձ պատահեցեր՝
կտա՛կ նուիրեալ, օրհնեալդ միայն ՚ի
շրթունս անքիծս լեզուաց երջանկաց,
ահա կաթիլ մի կաթին՝ քումդ կու
սութե յանձն իմ անձրևեալ՝ կենաց
ինձ զօրէ, մա՛յրդ բարձրելոյ տն յիս
արարչին երկնի և բնաւին երկրի ։
Ո՛ որ անճառապէս ծնար բովանդակ
մարմնով և համայն ածուածն, որ փա
ռաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբ
էութե, և անքննութե մերոյին բնութես
միացելով, ամ՝ և յամենայնում, մի յեր
րորդութեն․ նմա փառք յաւիտենից
յաւիտեանս ։
ամէն ։



digitised by A.R.A.R.@

Աղօթք Աստուածութեան։

Ով կենարար մարդասէր բարե-
գութ և խնամակալ որ ամե-
նեցուն․ որ թէպէտ գարշիս ՚ի զազիր
գործոց չարութեան մեր մեղաւորացս,
սակայն քո առատ ողորմութեամբդ ոչ ան-
տես արարեալ՝ միշտ խնամես զմեղա-
ւորս, և հրաւիրեալ կոչես առ քեզ։
Նաև ունկն քո լսել զխնդրուածս մեր․
պատրաստ է յամենայն ժամ․ վասն զի՝ դու
ինքնդ անսուտ բերանովդ քո ասացեր,
թէ ոչ եկի կոչել զարդարս, այլ զմե-
ղաւորս յապաշխարութիւն։ Արդ այս և
ես մի եմ ՚ի նոցանէ, և ինձէն իսկ վը-
կայեմ ստուգութեամբ․ թէ ոչ գոյ յիս մասն
բարեաց, և ոչ ինչ ՚ի գործոց առաքի-
նութեանց, որովք առաջի քո համարձակե-
ցայց՝ խնդրել ՚ի բազմագեղ ողորմու-
թենէդ զխնդրուածս սրտի իմոյ։ Այլ վասն
զի մինչև ցայժմ ՚ի ճանապարհի վրա-
հետական ընթացեալ, և ունայնութեանց
զհետ եղեալ․ և առ աստուածայինս ոչ փու-
թացեալ՝ անօրինեցայ։ Նաև արդ՝ բա-



րե-

digitised by A.R.A.R.@

յերար և թաղում ողորմ որ՝ խնդրեմ ՚ի քէն՝ զգործս ձեռաց քոց մի՛ անտես առներ, այլ՝ ըստ մեծի ողորմութեան քում՝ թո՛ղ զյանցանս, և քաւեա՛ զանօրէնութիւս իմ, վա՛յ՝ աղաչեմ զքեզ, զի յորում ժամու դատանիցիմ ՚ի մէջ բարութեան և արդարութեան. հա՛ն ՚ի տղմոյ անօրէնութեան աշխարհիս այսորիկ, ըստ սաղմոսողին բանի, որ հա՛ն ՚ի բանտէ զանձն իմ։ Նու արդարացո՛ զիս գործովք բարեաց. զի կարացից ասել ըստ առաքելոյն, ցանկամ ելանել ՚ի մարմնոյս. և լինել ընդ Քրիստոսի։ Նու քանզի այսչափ համարձակեցայ առաջի մեծ վայելչութեան քո, աղաչեմ՝ փրկել զիս և կեցուցանել. զի մի՛ կորիցեմ զյաւիտենական կորուստն։ Որ կարող ես՝ ողորմեա՛ ինձ ողորմելոյս, զի ընդ ամենայն սուրբս քո՝ փառաւորեցից զամենազօր Տէրութիւնդ զՀայր և զՈրդի և զՍուրբ Հոգիդ, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն։



digitised by A.R.A.R.@

## Սրբոյ Աստուածածնին որ ի Բուդ Մայր

Բեջասն:

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն
Յս· զհետ եղեն նր կոյրք եր-
կու՝ աղաղակէին և ասէին ·
ողորմեա՛ց մեզ որդի դաւթի: Եւ իբ-
րև եկն ՚ի տուն · մատեան առնա
կոյրքն · և ասէ ցնս Յս · հաւատայք
եթէ կարող եմ առնել ձեզ զայդ: ա-
սեն ցնա այո՛ տր: Յայնժամ մերձե-
ցաւ յաչսնց՝ և ասէ ըստ հաւատոց ձե-
րոց եղիցի ձեզ: Եւ բացան աչք նց,
և սաստեաց նց Յս և ասէ · զգո՛յշ կա-
ցէք՝ մի՛ ոք գիտասցէ: Եւ նոքա ելել
համբաւեցին զնա ընդ ամ երկիրն ը-
այն: Եւ յելանելն նց արտաքս, ահա
մատուցին առնա զայր մի համր դիւա-
հար: Եւ յելանելն դիւին խօսեցաւ
համրն և զարմացան ժողովուրդքն՝ և
ասեն · թէ և ո՛չ երբէք երևեցաւ այս-
պիսի ինչ յիսրայէլի: Իսկ փարիսե-
ցիքն ասէին · իշխանաւն դիւաց հանէ
դա զդևս:



digitised by A.R.A.R.@

## Սկիզբն Աւետարանիս որ ըստ Մարկոսի։

Եւ ել լուր նորա ընդ ամենայն կողմանս գալիլեացւոց։ Եւ փաղփաղակի ելեալ ՚ի ժողովրդեանէն եկն ՚ի տուն սիմոնի և անդրէայ յակոբու և յոհաննու հանդերձ։ Եւ զզոքանչ սիմօնի դնիւր ջերմացեալ և փաղփաղակի ասեն ցնա վասն նորա։ Եւ մատուցեալ յարոյց զնա կալեալ զձեռանէ նորա և եթող զնա տենդն և պաշտէր զնոսա։ Եւ իբրև երեկոյ եղև ՚ի մտանել արեգականն բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս։ Եւ էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունսն։ Եւ բժշկեաց զբազում հիւանդս ՚ի պէսպէս ախտից. և դևս բազումս եհան, և ոչ տայր խօսել դիւացն. զի գիտէին զնա թէ Քրիստոսն է։

## Սկիզբն Աւետարանիս որ ըստ Ղուկասու։

Եւ եղև յաւուրսն յայնոսիկ ել ՚ի լեառնն կալ յաղօթս, և հանէր զգիշերն ՚ի գլուխ յաղօթսն



digitised by A.R.A.R.@

ղօթան ա̃յ: Եւ իբրև այգ եղև կոչեց
զաշակերտսն իւր և ընտրեաց 'ի նոցանէ
երկոտասանս. զորս և առաքեալս անուա-
նեաց: Զսիմոն՝ զոր և պետրոս անուա-
նեաց. և զանդրէաս զեղբայր նորին,
և զյակոբոս, և զյոհաննէս. և զփիլիպ-
պոս. և զբարթուղիմէոս: Եւ զմատ-
թէոս. և զթովմաս. և զյակոբոս ալփէեայ.
և զսիմոն զկոչեցեալն նախանձայոյզ: Եւ
զյուդայ յակոբեայ և զյուդայ իսկա-
րիովտացի որ եղև իսկ մատնիչ: Եւ
իջեալ նոքօք հանդերձ 'ի տեղի մի տա-
փարակ և ժողով աշակերտացն նր̃ և
բազմութի̃ յոյժ ժողովրդեանն յա̃մ հրէ-
աստանէ և յէմ̃ և յայնմ կողմանէ և 'ի
ծովեզերէն տիւրոսի և սիդոնի: Որք
եկին լսել 'ի նմանէ և բժշկել 'ի հի-
ւանդութ̃ե իւրեանց և նեղեալքն այսոց
պղծոց բժշկէին: Եւ ժողովուրդն
խնդրէր մերձենալ 'ի նա զի զօրութի բա-
զում ելանէր 'ի նմանէ. և բժշկէր զա̃մեսին:

Յ ԱԷյ Լ̲ տրՆևս օր Բ̃ օր Յօհաննու.
ետ այսորիկ տօն էր հրէից, և
ել Յ̃ս յէ̃մ: Եւ էր յէ̃մ 'ի

պրոպատիկէ աւազանին՝ որ կոչիւր եբ-
րայեցւերէն բեթհեզդայ հինգ սրահ ։
Յորս անկեալ դնիւր բազմութ՟ի յոյժ
հիւանդաց․ կուրաց․ կաղաց․ գօսացե-
լոց, որք ակն ունէին ջրոցն յուզելոյ․
Եւ հրեշտակ տ՟ն իջանէր ըստ ժամա-
նակի յաւազանն․ և յուզէր զջուրսն․
և որ նախ 'ի շարժումն ջուրցն իջա-
նէր յաւազանն՝ բժշկիւր, ոչ ունելով
զնշան հիւանդութ՟ե ։ Եւ անդ էր այր
մի, որոյ լ՟ը ամ էր 'ի հիւանդութ՟ե իւ-
րում ։ Զնա իբրև ետես Յ՟ս զի ան-
կեալ դնիւր և գիտաց եթէ բազում
ժամանակք են այնուհետև, ասէ ցնա
կամիս ողջ լինիլ ։ Պատասխանի ետ նմա
հիւանդն․ տ՟ր ոչ զոք ունիմ, զի յոր-
ժամ ջուրքն յուզիցին արկցէ զիս յա-
ւազանն և մինչ ես դանդաղիմ, այլ ոք
քան զիս յառաջագոյն իջանէ ։ Ասէ
ցնա Յ՟ս․ արի՛ ա՛ռ զմահիճս քո և գնա՛ ։
Եւ ողջացաւ այրն և յարեաւ․ էառ
զմահիճս իւր և շրջէր․ և էր շաբաթ
յաւուրն յայնմիկ ։



digitised by A.R.A.R.@

Յիշատակարան տպագրողի գրոցս։

Շնորհիւ և ողորմութբ ամենա-
սբ երրորդութե Հօր և որդւոյ
և հոգւոյն սբյ, և բարեխօսութբ ամե-
նօրհնեալ սբ ածածնին կուսին, աւար-
տեցաւ երրորդ տպումն գրքիկանս՝ որ
է պատմութի սքանչելի նահատակութե
սբյ կուսին մարինեայ։ Ի վայելումն
ընդհանուր ազգիս հայկազնոյ, Մրդ՝
որք հանդիպիք սմա, և ընթերցմամբ
զմայլեալ հրճուիք, յիշեսջիք յարժա-
նաւոր յաղօթս ձեր ՚ի քս՝ զտպօղ գրո-
քոյս, որբազան Պատրիարգի յետին
ծառայ զանդրէաս սևոյկերս պօլսեցի, նաև
զհոգևոր և մարմնաւոր ծնօղս իմ ըզ-
կենդանիս և զննջեցեալս. այլև՝ յի-
շեսջիք զաշխատաւոր գործարանիս՝
զպալոթցի բրուտ մարուքեան տրդա-
մանուէլն՝ որ զգիրս կապարեայս շարեաց.
և զմրահար էքրէկցի յարութին, և զայլ
աշխատաւորս, որոց՝ Տր յս զփոխարէն
աշխատութեցն հատուսցէ զվարձս բա-
րեաց աստ և ՚ի հանդերձելումն. ամէն։

79
ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос Библиотека
ՀԱՍՌ-АзССР
А. Мясникяна

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@

digitised by A.R.A.R.@